ՀՏԴ 82.09
Գրականագիտություն

Սիրուն ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
բ.գ.թ.,դոցենտ
ԱրՊՀ դասախոս

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ «ԹՄԿԱԲԵՐԴԻ ԱՌՈՒՄԸ» ՊՈԵՄԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԳՈՒՍ ՄԵԹՈԴՈՎ

Հոդվածում պարզաբանվել է ժամանակակից մեթոդներից մեկը, որն օգնում է ավելի խորը և բազմակողմանի ուսումնասիրել Հովհաննես Թումանյանի «Թմկաբերդի առումը»պոեմը:Այն արդյունավետ է դարձնում դասագործընթացը, խթանում՝ աշակերտների ինքնուրույնությունը, ակտիվացնում նրանց մտածողությունը, հնարավորություն տալիս նրանց կատարելու հետևություններ և եզրակացություններ, օգտվելու իրենց իսկ կատարած որոնողական-հետաոտական աշխատանքներից: Թեման լիիրավ ընկալելու և աշակերտների ինքնուրույնությունը խթանելու նպատակով կարևոր է հարցերի պարզաբանման վերոհիշյալ յուրահատուկ եղանակը,որը բացահայտում է երկի հիմքում ընկած օբյեկտիվ ճշմարտությունը, օգնում՝ բնութագրելու երկի կերպարներին:

Բանալի բառեր՝ *Պոեմ, հիմնադիր, Թաթուլ, Թմկա տիրուհի, աշուղ, Նադիր շահ, ուսուցման մեթոդ, արդյունավետ, նպատակային, ակտիվություն:*

С.Багдасарян

ИЗУЧЕНИЕ ПОЭМЫ ОВАННЕСА ТУМАНЯНА «ТМКАБЕРДИ АРУМЫ» МЕТОДОМ «ЗНАЮ – ХОЧУ УЧИТЬ-УЧУ»

В статье описывается один из современных методов, который помогает более глубоко и разносторонне изучить поэму Ованнеса Туманяна «Тмкаберди арумы», что обучение делает эффективнее, стимулиует самостоятельности учеников и активизацию их мышления, позволяя делать выводы и использовать иследовательно-поисковые работу. Для полного понимания предмета и повышения самостоятельности учеников важен вышеупомянутый уникальный метод выяснения вопросов, который раскрывает объективную правду предмета, помогая охарактеризовать двух персонажей.

Ключевые слова: *поэма, основатель, Татул, бард, Надира, метод обучения, результативность, целеустремленность, активность.*

S.Baghdasaryan

STUDY OF HOVHANNES TUMANYAN'S POEM “TMKABERDI ARUM” BY THE METHOD “KNOW - WANT TO TEACH-TEACH”

The article describes one of the modern methods that helps to more deeply and comprehensively study the poem of Hovhannes Tumanyan "Tmkaberdi Arum", which makes learning more efficient, stimulates students' autonomy and activates their thinking, allowing them to draw conclusions and use research and research work. For the full understanding of the subject and increasing the independence of the students, the aforementioned unique method of clarifying questions is important, which reveals the objective truth of the subject, helping to characterize two c

Keywords. *poem, founder, Tatul, bard, Nadir, teaching method, effectiveness, purposefulness, activity.*

Յուրաքանչյուր երկ պետք է յուրացնել մտքով ու սրտով, հույզով, հասկանալով: Մայրենիի ուսուցչի համար կարևոր է ոչ միայն երկի բովանդակության ընկալումը, այլև դաստիարակչական կողմի ապահովումը: Անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել երկի ձևի ու բովանդակության ներդաշնակ կառուցվածքին, վեր հանել այն կարևորը, որին միտված է հեղինակի գլխավոր նպատակադրումը:

Ուսուցման երեք կարևոր հիմնախնդիրներից առաջինը՝ **ի՞նչ սովորեցնելը,** ծրագրային նյութի միջոցով իբրև ճանաչողական,իմացական արժեք, գիտելիք մատուցվում է սովորողներին:Երկրորդը՝ **ինչու՞ սովորեցնելը,**կրթության բովանդակությունը կազմող ունակություններ, կարողություններ, հմտություններ և արժեքային համակարգ բաղադրիչների միջոցով կարևորում է **ի՞նչ սովորելու նպատակը** ,իսկ երրորդը՝ **ինչպե՞ս սովորելը** պայմանավորում է դասավանդման կերպը, եղանակը, միջոցներն ու ձևերը,որոնք կազմում են ուսուցման մեթոդաբանությունը:

Ժամանակակից մանկավարժագիտության մեջ մեթոդների դասակարգման հիմքում ընկած են տարբեր մոտեցումներ՝ խոսքային, զննական , գործնական:Առավել տարածված է մի տեսակետ, ըստ որի ուսուցման մեթոդները պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ ավանդական և ժամանակակից:Ավանդական համարվում են այն մեթոդները, որոնց հիմքում ընկած են պատրաստի գիտելիքի պարզ փոխանցումը սովորողին և վերջինիս կողմից դրա վերարտադրումը,որի կիրառման ժամանակ սովորողն ուղղակի ուսուցչի հրահանգների կրողն է: Ժամանակակից մեթոդների հիմքում ընկած է սովորողի ինքնուրույն, ուսումնական գործունեությունը, գիտելիքների ձեռքբերման գործընթացում նրա ակտիվ և անմիջական մասնակցությունը: Արդյունավետ դասավանդումն իրականացնող գործոններ են նաև մեթոդական հնարներն ու վարժությունները, գեղագիտական ճաշակի և գեղեցիկի հանդեպ նուրբ վերաբերմունքի ձևավորումն ու աստիճանական խորացումը: «Քանի որ գեղեցիկի զգացողությունը,- գրում է Հենիկ Մախճանյանը,- գրողի տաղանդի մի մասն է և առանց դրա իսկական գրող չկա ,անհրաժեշտ է գրական երկի ուսուցման ժամանակ բացահայտե նրա

գաղափարական իմաստն ու գեղարվեստական արժեքը, և դա կատարել միաձույլ ներքին սերտ փոխկապակցության մեջ»[1]: Արդյունավետ դասավանդումն իրականացնող գործոններ են նաև մեթոդական հնարներն ու վարժությունները:

Մարդու մարդկայնացման և փրկության հիմնախնդիրը դարեր շարունակ եղել է համաշխարհային գրականության ,ինչպես նաև Թումանյանի ստեղծագործության, գլխավոր թեմաներից մեկը:Հին աշխարհի իմաստունները անտիկ շրջանից առ այսօր քննարկել են ներդաշնակ մարդու և նրա ինքնակատարելագործման հիմնախնդիրը:Մեծ լոռեցու համար այն նույնպես եղել է մտահոգիչ և խիստ հրամայական խնդիր:Դրա վառ ապացույցներից մեկն է նաև « Թմկաբերդի առումը » պոեմը:

Դասարանական ողջ կոլեկտիվին ակտիվացնելու և ուսուցանվող նյութի շրջանակները համեմատաբար ընդլայնելու նպատակով անհրաժեշտ է ունենալ ընթերակա աշակերտներ, որոնք դասավանդման ընթացքում ուսուցչի օգնականներն են և առանձնակի հակում ունեն գրականության նկատմամբ:

Մինչև պոեմի ուսուցումն սկսելը՝ ուսուցիչը ընթերակա աշակերտներին հանձնարարում է իմանալ Թմկաբերդ, Թմուկ բերդի, Ե. Լալայանի Երկերի հ. 1-ինի « Ջավախքի բուրմունք» բաժնից՝ Թմուկ բերդին վերաբերող զրույցի , Ա. Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի մասին տեղեկություններ, որոնք նրանք սիրով ներկայացնում են ուսուցչին և իրենց ընկերներին: Երկը ընթերցելուց և սյուժեն աշակերտներին ներկայացնելուց հետո աշակերտները ուսուցչի օգնությամբ կազմում են աղյուսակը ,որն ունի հետևյալ տեսքը Հիշեցնենք, որ բոլոր սյունակներում պետք է զգացվի ուսուցչի ուղղորդող օգնությունն ու ներկայությունը: Հիշեցնենք, որ բոլոր սյունակներում պետք է զգացվի ուսուցչի ուղղորդող օգնությունն ու ներկայությունը:

Գիտեմ	Ուզում եմ իմանալ	Սովորել եմ

Աղյուսակը նախ լրացվում է այն գիտելիքներով, որ արդեն ձեռք է բերվել.

Առաջին սյունակ՝ Գիտեմ

Այս սյունակում տեղադրվում են այն բոլոր հարցերը, որոնց պատասխաններին աշակերտները արդեն ծանոթ են:

1. «Թմկաբերդի առումը» պոեմի բովանդակությունը, ծանոթ եմ կերպարներին:

---

[1] ***Հ. Մախճանյան****, Հայ գրականության ուսուցման պատմություն,Ե.,1976 թ.,էջ 326:*

2. Թմկաբերդ-Մինադարյան դղյակ Մեծ Հայքի Գուգարք նահանգի Վերին Ջավախք գավառում, Կուր գետի ձախ ափին:Բերդը գտնվում էր երեք բարձրադիր բլուրների վրա և ուներ մոտ 150 մ երկարություն և 30 մ լայնություն՝շրջապատված պարիսպներով և ու երեք բլուրների վրա կառուցված աշտարակներով:Պարիսպները և աշտարակները շինված էին սրբատաշ քարով ուկրով և ունեին մոտ 1,5մ հաստություն:Բերդն ուներ երեք դուռ՝ հարավային, հյուսիսային և արևելյան:Առանձին ցածրադիր բլրի վրա պահպանվել են մատուռի հարավային և արևելյան պատերը,որոնց վրա պատկերված են եղել Ս. Աստվածածինը , երկու կույսերը և և երկու առաքյալները:Հարավային պատի կամարի ներքին մասում երևում է մի սրբի պատկեր:Հարավային դռան մոտից ստորգետնյա ճանապարհը ժայռի միջով անցնում էրդեպի Կուր գետը: Բլուրներից մեկի առջևում կա 4,5մ բարձրութամբ կոթող,որի շուրջը փռված են ավերակ բնակարաններ: Այստեղ էր Թմբուկ գյուղը,որի գերեզմանատանը կան հայերեն արձանագրություններով բազմաթիվ տապանաքարեր և խչարձաններ: Խաչքարերից մեկի վրա նշված է ՊԿԶ (1417թ.):Ավերակ սենյակների պատեր կան նաև Թմկաբերդի դիմաց,Կուր գետի աջ ափին:Գյուղը այսօր էլ գտնվում է իր տեղում:[1]

3. Ե. Լալայան, (Ջավախքի բուրմունք)-

Թմկաբերդի քրդերը պատմեցին ինձ, թե մի ժամանակ Թմկաբերդում իշխում էր մի հայ իշխան: Պարսից թագավորն եկել ,եչկար պաշարել էր այս բերդը, սակայն չի կարողացել առնել: Իշխանի կինը սիրահարվել է պարսից շահի վրան ծածուկ առել է նորա հաճությունը՝յուր հետ ամուսնանալու,եթե ինքը սպանե յուր ամուսնուն և բերդը հանձնե շահին: Եվ իբր նա սպանել է ամուսնուն, հարբեցրել է զորքին և բերդի բանալիները ուղարկել շահին: Շահն այսպիսով տիրել է բերդին և հարցրել է մատնիչ իշխանուհուն.«Ես եմ գեղեց՞կ, թե՞ ամուսինդ »: Եվ երբ սա պատասխանել է, թե ամուսինս գեղեցիկ էր՝ շահը հրամայել է կապել սորան ձիու ագիից և քաշ տալ ՝ մինչև մեռնելը,ասելով. «Եթե ամուսինդ շահից գեղեցիկ էր ՝ինչու՞ սպանեցիր»:[2]

4. «Ալմաստ» օպերան գրվել է Ալեքսանդր Սպենդիարյանի կողմից՝ Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմի հիման վրա:Այն հայ ժողովրդի հերոսական – ազատագրական պայքարն արտցոլող հոգեբանական-փիլիսոփայական բնույթի երաջշտական դրամա է: Առաջին անգամ բեմադրվել է Մոսկվայում, 1930-ին, իսկ Հայաստանում բեմադրվել է 1933-ին՝Երևանի օպերայի և բալետի թատրոնի բացման օրը: Վերաբեմադրվել է 1939-ին, 1969-ին և 1971-ին: Գլխավոր դերերգերը կատարել են՝ Ալմաստ՝Թ. Շահնազարյան, Տ. Սազանդարյան,Մ. Չմշկյան, Թաթուլ ՝ Պ. Լիսիցյան, Մ. Երկաթ, Նադիր Շահ՝ Լ. Հովհաննիսյան, Հ. Ալավերդյան,Աշուղ՝ Վ,

---

[1] *ՀՍ հանրագիտարան, Հ4,Ե,978թ.,էջ 193:*

[2] ***Ե. Լալայան** ,հ 1,Ե.,1953թ., էջ 403:*

Միրաքյան, Գ. Գաբրիելյան, դիրիժորներ՝ Գ. Բուդաղյան, Օ. Դուրյան, ռեժիսորներ՝ Ա.Բուրջալյան, Վ. Աճեմյան, նկարիչներ՝ Մ. Սարյան,Մ. Ավետիսյան…[1]:

5.Պոեմի առաջին երկու հրատարակությունները (1905 և 1908) ունեին հատուկ ենթավերնագիր՝ «Աշուղի զրույցը», որը հետո բանաստեղծը հանել է:

6.«Մարդու միակ իսկական անմահությունը նրա գործն է,այն դրական արդյունքները,որ նա թողնում է հաջորդ սերունդներին,այն բարի անունը,որ նրանից մնում էմարդկային հիշողության մեջ: Խաբուսիկ և անցողիկ են փառքն ու հարստությունը,երկրային բոլոր վայելքները, և միայն «գործն է անմահ»[2], - գրում է գրականագետ Էդ.Ջրբաշյանը: Հաստատեցեք կամ հերքեք ասվածը:

Երկրորդ սյունակ՝ ուզում եմ իմանալ:

Այս սյունակում տեղադրվում են այն հարցերը, որոնց պատասխանները պետք է գտնվեն և յուրացվեն:

1.Ինչու՞ է Թումանյանը աշուղին ընտրել իր գլխավոր գաղափարն արտահայտելու համար:

2.Ինչու՛ է Թումանյանը պոեմի սկզբում նշում.

Էսպես է ասել հընուց էդ մասին
Ֆարսի բյուլբյուլը,անմահ Ֆիրդուսին,
Ինչը կըհաղթի կյանքում հերոսին,շ
Թե չըլինեին
Կինն ու գինին:

3.Ինչու՞ է Նադիր շահը պատժում Թմկա տիրուհուն:

4.Թմկա տիրուհին միայն իր ամուսնու՞ն է դավաճանում:

5.Հիմնավորվա՞ եք համարում, որ Թաթուլի քաջության և հերոսության աղբյուրը ջահել, սևաչյա կինն էր:

6. Թմկա տիրուհին հեշտությա՞մբ է գնացել իր ստոր քայլին:

7. « Ալմաստ» օպերայի մասին այլ տեղեկություններ:

8.Ի՞նչ գիտես պոեմի ժանրային հատկությունների մասին:

9. Ցանկանում եմ բնութագրել պոեմի դրական և բացասական կերպարներին:

10. Լավ և վատ մարդկանց մասին ի՞նչ կարծիք ուներ Թումանյանը:

11. Նադիր շահը պատահակա՞ն հերոս է, թե՞ պատմական :

12.Սովորենք Թումանյանի Մարդու և Մարդկայինի մասին գրական դասերից մի քանիսը::

Երրորդ սյունակ՝ Սովորել եմ:

Այս սյունակում տեղ են գտնում սովորած, հիմնավորված բոլոր հարցերի պատասխանները:

---

[1] *ՀՍ հանրագիտարան, Հ 1,Ե.,1974թ.,թջ 182:*

[2] ***Էդ. Ջրբաշյան**, Թորմանյանի պոեմները,Ե.,1986թ.,էջ 352:*

1.Մենք նկատեցինք, որ պոեմն սկսվում և ավարտվում է աշուղի խոսքով, որը հռչակում է հեղինակի հիմնական գաղափարը:Դրանք Թումանյանի ամենանվիրական խոհերն են մարդու կոչման և իրական անմահության մասին, բարու և չարի մասին, բանաստեղծի գեղեցիկ երազանքը մարդկային բարձր կատարելության՝ անարատ մարդու վերաբերյալ: Բացի դրանից՝ Թումանյանը իր գաղափարներն արտահայտելու համար աշուղին է ընտրել՝ հաշվի առնելով, որ պատերազմի ժամանակ միայն նրանք ազատ ել ու մուտ ունեն հակառակորդ բանակների տարածքներ: Հիշենք աշուղի խոսքերն սկզբում,երբ նա ազդարարում է.

Գործն է անմահ, լա՛վ իմացեք,
Որ խոսվուն է դարեդար;
Երնե՛կ նրան , որ իր գործով
Կապրի անվերջ անդադար:

Թումանյանի կարծիքով միայն փառաբանված, լավ գործերի հեղինակ մարդը կարող է հասնել անմահության: Հեղինակի սույն կարծիքը նորից աշուղն է ազդարարում վերջում՝ ի լուր աշխարհի.

Անց ենք կենում…միայն անմահ.
Գործն է խոսվում լավ ու վատ,
Ա՛խ, երանի՝ ով մարդ կըգա
Ու մարդ կերթա անարատ:

2. Թումանյանը հատուկ վերաբերմունք ուներ արևելյան քնարերգության և հանճարեղ պոետների հանդեպ: Դրա համար պոեմում ծավալվող դեպքերի հիմնավորումը նա կապում է Ֆիրդուսու հետ, ով իր իմաստնությամբ կարծես կանխազգում է գալիքը:

3.Նախ՝ ժողովրդական ավանդության բարոյական սկզբունքը պահանջում է, որ չարն անպայման պատժվի: Թեպետ պարզ երևում է, որ Թմկա տիրուհին զոջացել է իր ամոթալի արարքի համար, բայց նա. ով դավաճանում է իր ամուսնուն և հայրենիքին, կդավաճանի նաև իրեն տիրողին:

4. Առաջին հերթին նա դավաճանել է հայրենիքը, քանի որ ուժեղ հայրենիքը հենվում է ուժեղ ընտանիքների վրա:

5.Այո՛, թե՛ կյանքում, թե՛ այս պոեմում կինը անձնուրացության կարող է մղել ամուսնուն, կամ՝ կործանել: Իսկ սա նշանակում է, որ ամեն հարցում կինը պետք է հավատարիմ լինի ամուսնուն և կանգնած լինի նրա կողքին, որպեսզի ամուր և անսասան լինի ընտանիքը:

6.Ո՛չ:Պարզ երևում է, որ նա ապրումներ է ունեցել, երբ աշուղի երգից հետո վրդովվել է հոգին.

Լըռում է մատաղ Թըմկա տիրուհին.
Եվ վըրդովվում են իր միտքը թաքուն
Դավաճան գործի ամոթը խորին
Եվ արքայական փառքն ու մեծություն:

Կամ՝ Լրռում է չքնաղ Թմկա տիրուհին
Գիշեր ու ցերեկ նորից ու նորից…
Ու դարձավ նա լու՛ռ,դալու՛կ,մըտախո՛հ,
Եվ քունը փախավ սիրուն աչքերից…

Հիշենք նաև 10-րդ գլխից մի հատված, երբ երևում է, որ մատնիչը լիովին զղջացել է իր ստոր արարքի համար.

-Պատասխան տո՛ւր ինձ ,մատնիչ սևաչյա,
Մի՞թե Թաթուլը քաջ չէր և սիրուն…

Տեսնելով իր դիմաց նենգ ու քստմնելի Նադիրին, ով իր ազնիվ, քաջարի և հավատարիմ ամուսնու հակապատկերն է՝ նա պատասխանում է.

-Քաջ էր և սիրուն քեզնից առավել.
Մի բարձր և ազնիվ տղամարդ էր նա.
Կնոջ մատնությամբ ամրոց չէր առել,
Չէր եղել կյանքում երբեք խաբեբա…

7.Թումանյանի դուստրը՝ Նվարդ Թումանյանն իր «Հուշեր և զրույցներ» գրքում գրել է.«…Սպենդիարանը հետաքրքրվեց «Անուշ» պոեմով, ուզում էր ձայնագրել: Բայց ծանոթանալուց հետո նյութը գտավ բոլորովին անծանոթ: Որոշեցին ամառը միասին Լոռի գնալ: Հետո հայրիկը կարդաց «Փարվանան», որը կոմպոզիտորը հավանեց և ավելի հարմար գտավ օպերայի համար, բայց նկատեց,որ սյուժեն փոքր է …Հայրիկը կարծես թե գլխի ընկավ նրա ցանկացածը և կարդաց «Թմկաբերդի առումը» պոեմը: Սպենդիարյանը տեղից վեր կացավ ու սկսեց սենյակում ոգևորված ման գալ…

Հայրիկի ցանկությամբ օպերան պիտի կոչվեր «Գոհար»՝ իշխանուհու անունով»: Բայց Սպենդիարյանի բացատրությունից հետո այն փոխարինվեց այդ անվանը հոմանիշ «Ալմաստ» անունով:

8. Պոեմ անվանումը գալիս է հին Հունաստանից, որ նշանակում է «ստեղծել»: Իբրև գրական ժանր՝ այն չափածո ծավալուն ստեղծագործություն է, որի տարբեր մասերը միավորված են սյուժեի կամ կերպարի ընդհանրությամբ: Նրան հատուկ են թե՛ պատմողական, թե՛ քնարական հատկանիշներ: Այս առումով էլ պոեմները բաժանվում են երեք խմբերի կամ տեսակների՝ **պատմողական, քնարականև քնարապատմողական**: **Պատմողական** պոեմներին հատուկ են սյուժեի և կերպարների առկայությունը,պատմողական շարադրանքը,դեպքերի, դեմքերի նկարագրությունները:Այսպիսինն են Թումանյանի «Սասունցի Դավիթը»,Դ. Վարուժանի «Հարճը» պոեմները: **Քնարական են** Թումանյանի «Դեպի անհունը», «Պոետն ու մուսան»,Իսահակյանի «Աբու- Լալա Մահարին»: Վերջիններիս մեջ ներկայացվում են հեղինակի մտորումները, խոհերը այս կամ այն երևույթի, իրադարձության մասին: **Քնարապատմողականի** մեջ, ինչպիսիք են Թումանյանի «Անուշը», «Թմկաբերդի առումը» ծավալվող դեպքերի պատմությունն ուղեկցվում է **քնարական շեղումներով** (էն տեսակ կին,ես իմ հոգին», էդպես է ասել հնուց այդ մասին և այլն):

Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմը մի ասք է՝ պատմություն ազնվության ու նենգության, հայրենասիրության և դավաճանության, չարի և բարու, լավ ու վատ արարքի մասին: Ժանրային առումով «Թմկաբերդի առումը» ժողովրդական լեգենդի մշակում է, և պատմական պոեմի ճշմարտացի վերարտադրում: Դրա արդյունքում պոեմի հիմքում դրված, ժողովրդական ավանդությունը սկզբից մինչև վերջ հենված է պատմական դեպքերի վրա, որի արդյունքում ստացվել է հերոսական – էպիկական մի հիանալի ստեղծագործություն:

9.Մարդկային առաքինություններով օժված հերոսի որոնումներում Թումանյանն առանձին սիրով է միշտ գովերգել իր իդեալ հերոսին, որն այս պոեմում **Թաթուլն** է: Նա քաջ է, հայրենասեր և ազնիվ, ընտանիքին նվիրված: Մեր ժողովրդական հերոսի՝ Դավթի նման նա բացսիրտ է և հեռու չարամտությունից ու նենգությունից. անգամ իր կռիվն անում է առանց դավերի, շիտակ ու հրապարակավ: Նրա համար սերն առ հայրենիք և կին միահյուսված են իրար և անբաժան են մեկը մյուսից: Թաթուլն անմահացել է իր անձնվիրությամբ, լավ ու բարի գործերով:

Թմկա տիրուհին իր ամուսնու ոգեշնչման աղբյուրն էր, բայց դարձավ նրա կործանման պատճառը: Նրա արտաքին ցեղեցկության տակ թաքնված էր մի նսեմ, ընչաքաղց հոգի: Մեր կարծիքով նա կատարել է կրկնակի դավաճանություն և՛ ամուսնու, և՛ հայրենիքի հանդեպ: Եվ թեպետ պոեմի վերջում նա խորապես զջացել էր՝ տեսնելով իր գեղեցիկ, աննկուն, առաքինի ամուսնու վեհ, իսկ իր դիմաց՝ փոքրոգի շահի ատելի կերպարը, համեմատելով և համոզվելով դրանց հսկայական տարբերության մեջ, միաժամանակ գտնում է, որ միևնույն է՝ պետք է ստանար իր արժանի պատիժը: Նա պատմության մեջ մնաց որպես դավաճան կնոջ, չարության խորհրդանիշ:

Ինչպես պատմական աղբյուրներում է նշվում, **Նադիր շահը** դաժան է , նենգ ու խարդախ: Թաթուլի կռիվն արդարացված է. նա պայքարում է, իր բերդը, իր հայրենիքը պետք է պաշտպանի: Նույնը չենք կարող ասել Նադիրի մասին, ով հարձակվել է՝ մի այլ աշխարհից տիրելու, զավթելու այն ամենին, ինչը իրավամբ պատկանում է ուրիշին: Դրա համար իրենց մարդկային նկարագրով Թաթուլը և Նադիրը հակադիր բևեռներում են. մեկը հայրենասեր, ազնիվ, մյուսը՝ ագրեսիվ մղումներով տարված, նենգադավ և ստոր: Շահը պատմության մեջ մնաց որպես չարիք տարածող անհատ, որին խորթ են մարդկային նկարագրի գեղեցիկ գծերը

Պոեմի առաջին հրատարակությունները ունեին ենթավերնագիր՝ «Աշուղի զրույցը», որը հետո բանաստեղծը փոխել է: Պոեմի սկզբում և վերջում Թումանյանի երկի հիմնական գաղափարը արտահայտում է **աշուղը:** Բայց դա ոչ թե փառաբանում և անեծք է, կամ պարզապես հերոսների նախնական թվարկում, ինչպես սովորաբար լինում է ժողովրդական զրույցների մեջ, այլ ստեղծագործության հիմնական գաղափարի հռչակում՝ մի դեպքում՝ պատմությունից առաջ իբրև նրա նախադուռ, իսկ մյուս

դեպքում՝պատմության վերջում իբրև եզրակացություն և ավարտ: Անմահ գործի և անարատ մարդու գեղարվեստական իդեալը կարևոր նշանակություն ունի ոչ միայն այս պոեմի, այլև բանաստեղծի աշխարհայացքն ու նրա գեղագիտական համակարգն արժևորելու համար:

10..Հայ գրականության մեջ Թումանյանն այն գրողն է, ում առանձնապես շատ է մտահոգել կատարյալ Մարդու պրոբլեմը է,որը տարբեր ձևերով արծարծել է: Պտահական չէ, որ նա իր մի շարք երկերում, նամակներում և հրապարակախոսական հոդվածներում անդրադարձել է այդ թեմային: Հիրավի՛ այսօր սերունդները հիշում են և՛ Թաթուլին և՛ դավաճան կնոջը, բայց մի տարբերությամբ՝ հերոսին հիշում են օրհնությամբ ու սիրով, իսկ կնոջը՝ անեծքով, դառնությամբ:Նույն ձևով մենք հպարտությամբ ենք հիշում Վարդան Մամիկոնյանին, իսկ Վասակին՝ նզովքով և ատելությամբ: Պատմությունը կրկնվում է, այսօր էլ կան և՛ պանծալի հերոսներ, և՛ ընտանիքի ու հայրենիքի դավաճաններ:

11.Մենք հասկացանք, որ, Թումանյանն աշխատել է պոեմը կապել որոշ պատմական դարաշրջանի հետ: Ժողովրդական ավանդության անորոշ «պարսից շահը» պոեմում դարձել է Նադիր շահ, որը թագավորել է 18-րդ դարի 30-40-ական թվականներին (1736-1747): Այդ կոնկրետացումը պատահական չէր. պատմությունից հայտնի է, որ Նադիր շահը բազմաթիվ արշավանքներ է կատարել դեպի Անդրկովկաս և հայտնի էր իր դաժանությամբ և նենգությամբ, ով և դարձել է բացասական կերպարի նախատիպ:

12. **Ահա Թումանյանի ասույթներից մի քանիսը**.

Գրականությունը ոչ միայն արտացոլում է ժամանակը և իր դեպքերն ու դեմքերը,այլև տալիս է իր լույսն ու ջերմությունը կյանքին և ձգտում է կյանքում ստեղծել մարդու վեհ ու վսեմ , մաքուր և անաղարտ պատկերը՝ կազմված ու հյուսված բնության ամենամաքուր տարրերից:

Ոչ մի պաշտոն կամ կոչում չկա, որ հավասար լինի և կարելի լինի համեմատել Մարդ կոչումի հետ:

Լավ մարդը - էդ բնության, ավելի ճշմարիտը՝մարդկության մեջ ամենակատարյալ ու ամենասքանչելի երևույթն է-և ամենահազվագյուտը: Աշխատեցեք ձեր սիրտը պահել մաքուր ու լիքը ամենալավ և ամենաբարի զգացմունքներով և աշխարհին ու մարդուն նայեցեք բարի սրտով ու պայծառ հայացքով:

Աշխարհքում ամեն բան հեշտ է, մի բան է դժվար՝մարդ լինելը…. Հեշտ բան հո չէ Մարդ լինելը:

Ճշնարիտ, մի՞թե գեղեցիկ կնոջից ավելի սրտառուչ երգ կա, կամ առաքինի մարդուց ավելի վսեմ բանաստեղծություն:

ԳՈՒՍ աղյուսակը լրացվում, ամփոփվում և ամբողջացվում է ամբողջ դասարանի կամ առանձին աշակերտների կողմից դասակարգված ողջ տեղեկատվությամբ, որն անցնում է ուսուցչի հսկողությամբ և լրացումներով: Այսպիսով՝ այս մեթոդը ուսուցիչներին հնարավորություն է տալիս

պատկերացում կազմելու աշակերտների տվյալ թեմայի վերաբերյալ ունեցած նախնական գիտելիքների մասին, զարգացնում են նրանց վերլուծական-հետազոտական հմտությունները, որի ընթացքում նրանք սովորում են ավելի ուշադիր ընթերցել ոչ միայն ուսուցանվող երկը, այլև նրան առնչվող նյութերը, ակտիվորեն մասնակցում են երկը վերլուծելու, կերպարները բնութագրելու, ինքնուրույն երահանգումներ կատարելու գործընթացին: ԳՈՒՍԸ ժամանակակից դասավանդման մեթոդ է, որը կիրառվում է և՛ չափածո, և՛ արձակ երկերի ուսուցման ժամանակ: Կարևորն այստեղ մեթոդի ճիշտ ընտրությունն է, որը դասապրոցեսը դարձնում է հետաքրքիր և արդյունավետ:

Երկն ամբողջությամբ ընկալելու և ըստ ամենայնի հետևություններ անելու տեսակետից կարևոր է նաև արտահայտիչ ընթերցանությունը, անգիր ասմունքը: Ուսուցիչն ընտրում է պոեմի նախերգանքը և վերջերգը, իսկ դերերով ընթերցման և ասմունքի համար՝ Նադիր շահի և Թմկա տիրուհու երկխոսություն:Այն կօգնի ավելի արժևորելու պոեմի հիմնական գաղափարը, Թմկա տիրուհու՝ թեպետ ուշացած, բայց տեղին զղջման խոսուն փաստը: Տեղին է նաև «Ալմաստ» օպերայի տեսանյութի դիտումը:

Դասը անպարագիծ և բովանդակալից պրոցես է, որի կախարդական դուռը բացում է ուսուցիչը և առաջնորդում իր սաներին դեպի գրականության հրաշքներով լի աշխարհը:Այդ հրաշք աշխարհի դռները բացվում են այլևայլ մեթոդներով և հնարներով, որոնք անընդհատ թարմացվում և հարստանում են: Գրականության արդի մեթոդների համակարգում ԳՈՒՍ-ը առաջնակարգ և արդյունավետ մեթոդներից է: Սա նշանակում է, որ այս մեթոդն **արդիական**, է, քանի որ բարձրացնում և արդյունավետ է դարձնում դասապրոցեսը, խթանում՝ աշակերտների ինքնուրույնությունը, ակտիվացնում նրանց մտածողությունը, հնարավորություն տալիս նրանց կատարելու հետևություններ և եզրակացություններ, օգտվելու իրենց իսկ կատարած որոնողական-հետատոտական աշխատանքներից: Թեման լիարժեք ընկալելու և աշակերտների ինքնուրույնությունը խթանելու նպատակով կարևոր է հարցերի պարզաբանման վերոհիշյալ յուրահատուկ եղանակը, որը բացահայտում է երկի հիմքում ընկած օբյեկտիվ ճշմարտությունը, օգնում՝ հիմնավորված և ճիշտ բնութագրեր տալ երկի կերպարներին:

Հոդվածի **նորույթն** այն է, որ այն առաջին անգամ է բացահայտվում և նպատակ ունի օգնելու մայրենիի ուսուցիչներին և մանակավարժական բուհերի ուսանողներին՝ մեթոդական պատրաստականության բարդ և դժվարին գործում, նպաստելու նրանց մեթոդական զինանոցի հարստացմանն ու ընդլայնմանը:Այն կարող է հետաքրքրել նաև մանկավարժությամբ և մեթոդիկայի հարցերով զբաղվող մասնագետներին:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ. Ս.Ա.Խանյանը: